

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի նորակառույց մարզադպրոցը (հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Երևանյան 2/1) «Սևան» մարզական կազմակերպությանը նվիրաբերելու առաջարկության վերաբերյալ

«Սևան» մարզական հասարակական կազմակերպությունը իր գործունեության ծրագրում ամրագրել և ներկայումս իրականացնում է մատաղ սերնդի ուսումնասպորտային աշխատանքներ տարբեր մարզաձևերում՝ ներգրավելով 2019 պատանի մարզիկների, այդ թվում՝ Աշտարակ քաղաքում 400 մարզիկ, ինչպես նաև ազգաբնակչության շրջանում կազմակերպում է մարզական մասսայական միջոցառումներ, որտեղ ներգրավվում են մարզի բոլոր բնակավայրերի հավաքական թիմերը՝ ըմբշամարտի, վոլեյբոլի, բասկետբոլի, շախմատի, ֆուտբոլի, ծանրամարտի և աթլետիկայի մարզկան միջոցառումներում, ինչը նպաստում է առողջ ապրավակերպին և մարտունակ սերնդի դաստիարակմանը:

Մարզադպրոցը յուրաքանչյուր տարի իրականացնում է շուրջ 120 պատանիների ընդունելություն, ավագ սերնդի հետ կազմակերպում մարզական միջոցառումներ:

Իրականացվող ծրագրերը և մարզադպրոցի գործունեությունը կազմակերպելու նպատակով «Սևան» մարզական հասարակական կազմակերպության կողմից հինգ տարվա ընթացքում ներդրվելու է 63 մլն ՀՀ դրամ, որից 2017 թվականին՝ 11 մլն ՀՀ դրամ, 2018 թվականին՝ 13 մլն ՀՀ դրամ, 2019 թվականին՝ 13 մլն ՀՀ դրամ, 2019 թվականին՝ 13 մլն ՀՀ դրամ, 2020 թվականին՝ 13 մլն ՀՀ դրամ և 2021 թվականին՝ 13 մլն ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերաշարադրյալը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը չի առարկում Աշտարակ քաղաքի Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող մարզադպրոցը «Սևան» մարզական հասարակական կազմակերպությանը, բացառապես որպես մարզադպրոց օգտագործելու պայմանով, նվիրաբերելու առաջարկությանը:

Նվիրատվությունն այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն, ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնի: